ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 595
15 հոկտեմբեր 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 102-Ա -105-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր՝ Լ Ե Վ Ո Ն Զ Ա Վ Ա Ր Յ Ա Ն

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան
098 048 046

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 102-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 18-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,ՀՀ<<Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> 04.10.2005թ. ընդունված ՀՕ -199-Ն, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, 10.06.2008թ <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ -117-Ն օրենքով, ինչպես նաև հաշվի առնելով, որ բնակելի տունը, դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, իսկ առկա շինությունները կառուցվել են մինչև 2001թվականի մայիսի 15-ը, հիմք ընդունելով 13.09.2018թ. ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրված սեղանամատյանում N 2632 ,<<ԱԿՆ ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի և շինության հատակագծերը և քաղաքացի Ռուզաննա Մելքոնյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Վերականգնել և ճանաչել քաղաքացի Ռուզաննա Ժորայի Մելքոնյանի սեփականության իրավունքը Թումանյան համայնք,Թումանյան քաղաք,փողոց 18 թիվ 1 հասցեի /06-004-0057-0004 ծածկագրի/ 0,0802 հա հողամասի և հողամասում 1974 թվականին կառուցված 40,9 քմ մակերեսով բնակելի տան,1975թ. կառուցված 11,1քմ մակերեսով բաց պատշգամբի,1974թ. կառուցված 12,9 քմ մակերեսով նկուղի,1978թ.կառուցված 4,4քմ մակերեսով նկուղի,1978թ.կառուցված 10,8քմ մակերեսով մառանի, 1975թ. կառուցված 8,4քմ մակերեսով խոհանոցի և 1974թ. կառուցված 28,6 քմ մակերեսով անասնագոմի շինությունների նկատմամբ:
2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3.Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:
4.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2018թ. սեպտեմբերի 13-ի <<Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի 18-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տան և զբաղեցրած հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու մասին>> թիվ 98-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
04 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 103-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Հայկանուշ Աղամյանի դիմումը՝ որոշում եմ

1.Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի 2-րդ փողոց թիվ 4/2 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N21102013-06-0030,կադաստրային ծածկագիր 06-004-0012-0036) հողամասում 2011թ.ինքնակամ կառուցված 48.74քմ մակերեսով բնակելի տան մասը,11.94քմ մակերեսով հարթակը, 58.09քմ մակերեսով ծածկարանը,6.64քմ մակերեսով պարիսպը, 2.56քմ և 6.21 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական որպես Հայկանուշ Աղամյանի սեփականությունը:

2.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3.Շինությունների օրինականացման համար սահմանել վճար՝ 134.18,x 10.000 x 0,035 =46963 դրամ (քառասունվեց հազար ինը հարյուր վաթսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Նշված վճարը անհրաժեշտ է փոխանցել Թումանյանի համայնքապետարանի 900265123407 հաշվեհամարին:

5.Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 104-Ա

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 26-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյանի քաղաքային համայնքում 2018թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 49-Ն որոշումը և Թումանյան համայնքի ԱՁ -ների հայտերը՝
որոշում եմ.

1.Թույլատրել Թումանյան համայնքի ներքոգրյալ ԱՁ-ներին իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք.

1/Հախվերդյան Հովակիմ - ք.Թումանյան 2018թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
2/Մաթևոսյան Մարիետա -ք.Թումանյան 2018թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
3/Սարգսյան Գայանե -ք.Թումանյան 2018թ.հոկտեմբերի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
4/Սարգսյան Հայկուշ-ք.Թումանյան 2018թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
5/Մխիթարյան Ստեփան -ք.Թումանյան 2018թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
6/Սարգսյան Մարինե -գ.Մարց 2018թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2018թ. դեկտեբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
7/Սարգսյան Մանուշակ -գ.Մարց 2018թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
8/Թորոսյան Արտյոմ -գ.Քարինջ 2018թ.հոկտեմբերի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
9/Քոչարյան Նաիրա -գ.Քարինջ 2018թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
10/Վանյան Լաուրա -գ.Քարինջ 2018թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
11/Մաթևոսյան Սուսաննա - գ.Ահնիձոր 2018թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար,
12/Խաչատյան Հասմիկ - գ.Լորուտ 2018թ. հուլիսի 1-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար:

2.Հարկատուից գանձել համապատասխան տեղական տուրք

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 105-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարց գյուղի Միեր Ղազարյանի դիմումը՝
որոշում եմ.

1.Բավարարել Միեր Ղազարյանի դիմումը և թույլատրել կատարել իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան կցակառույցի կառուցման շինարարական աշխատանքները:
2.Շինարարական աշխատանքները սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. թույլտվության առկայության դեպքում:
3.Շինարարության թույլտվության համար համայնքապետարանի դրամարկղ մուծել 15000 դրամ:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ